

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶ
ՊԱՐՏԻԶԱԿ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 19
17.01.2013թ

ՀՀ Արագածոտնի մարզ գ. Պարտիզակ
e-mail-partizakigp@mail.ru
Հեռ.099792827

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի
մարզպետ պարոն Ս.Սահակյանին


Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքի 2013-2016թթ
սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը՝ հաստատված ավագանու N-7
որոշմամբ:

Համայնքի ղեկավար

Լ. Ավագյան
Լ. Ավագյան

Մասնագիտացված կազմակերպչական ծախսերի համար
17.01.2013
Մասնագիտացված կազմակերպչական ծախսերի համար
N 2/146-B



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՏԻԶԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

02.10.2012թ

<< Արագածոտնի մարզի Պարտիզակ
 e-mail-partizakigr@mail.ru
 Հեռ.099762827

ՈՐՈՇՈՒՄ

<< Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքի ավագանու 2012թ-ի
 դեկտեմբերի 28-ի թիվ 2 որոշումից

Պարտիզակ գյուղական համայնքի քառամյա ծրագրի հաստատելու մասին

Պեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության
 օրենքի Պարտիզակ համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Պարտիզակ գյուղական համայնքի քառամյա ծրագրը

Կողմ-3

դեմ -0

ձեռնպահ-0

Ավագանու անդ.

Ս.Հարությունյան
 Գ.Սարգսյան
 Մ.Մարգարյան

Համայնքի ղեկավար

Է.Ավագյան




Հայաստանի Հանրապետություն

Արագածոտնի Մարզ

Պարտիզակի Համայնքի

2013-2016 Սոցիալ-Տնտեսական Զարգացման

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Խազմեց՝ համայնքի ղեկավար  Լյուդա Ավագյան

Հաստատվել է համայնքի

նախագահու նիստում



Պարտիզակ 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների, առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1- Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված 2- Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ինչ է քառամյա ծրագիրը

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակում է համայնքի զեկավարի և նրա աշխատակազմի կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալտնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի Իրավիճակի գնահատում

Պատմական ակնարկ, աշխարհագրական դիրքը

Պարտիզակի համայնքը ստեղծվել է 1975թ-ին, պետական պահուստային ֆոնդի հողերի հիմքի վրա: Գյուղը գտնվում է Արարատյան դաշտին հարող կիսաանապատային, չոր, <<Ղոեր>> կոչվող տարածքում: Ծովի մակերևույթից 1100մ բարձրության վրա:

Ժողովրդագրություն

Պարտիզակում ապրում են նախկին ՀՀ տարբեր շրջաններից եկած և Ադրբեջանից բռնագաղթված շուրջ 92 ընտանիք՝ 414 բնակչով: Տարբեր պատճառներով գյուղից հեռացել են 19 ընտանիք՝ 68 բնակչով: Այժմ գյուղում ապրում են 79 ընտանիք՝ 362 բնակչով, որոնք բաժանվում են հետևյալ սոց խմբերի.

1. տղամարդիք	160
2. կանայք	202
3. երեխաներ	97
4. դպրոցականներ	48
5. կենսաթոշակառուներ	9
6. հաշմանդամներ	13

Տեղական ինքնակառավարման մարմինները

Պարտիզակի գյուղապետարանը ստեղծվել է 1996թ-ին ունի 3 հիմնական աշխատողներ, համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, առաջատար մասնագետ: 2009թ փակվել է գյուղի մշակույթի տունը, իսկ 2011թ-ին գրադարանը հանձնվել է Պարտիզակի միջնակարգ դպրոցին շենքային պայմանների բացակայության պատճառով: Ներկա դրությամբ գյուղապետարանը գտնվում է բուժ-մանկաբարձական կետում: Համայնքի ղեկավարի՝ աշխատակազմի կառուցվածքը բերված է հավելված 1-ում: Համայնքում ընտրված են չորս ավագանի, որոնք աշխատում են տարբեր բնագավառներում:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի Ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղապետարանի և նրա ենթակառույցներում եղած գրասենյակային գույքը մասամբ մաշված են և պիտանի չէ օգտագործման:

Համայնքի սեփականություն են հանդիսանում ավտոմեքենայի մեկ նավեւր քանդված վիճակում, բուժ-մանկաբարձական շենքը: Հմայնքի սեփականություն է հանդիսանում նաև գյուղի ոռոգման ներքին ցանցը՝ 30 կմ երկարությամբ, որը մասամբ քաղված է, և հիմնականում չի գործում:

Համայնքի սեփականություն են հանդիսանում նաև խմելու ջրի ներքին ցանցը <<որն ունի վերակառուցման կարիք>> և գերեզմանոցը <<որը տեղաձևվել է և ներկայաց-վել մարզպետարանի քաղաքաշինության բաժին>>:

Շրջակա Միջավայրի Պահպանություն

Գյուղն ունի ջրազիժ և ջրահավաք ավազան: Խմելու ջուրը ստացվում է ինքնահոս ամեն օր օրական 2 ժամ: Ջրահավաք ավազանը, ինչպես նաև ամբողջ խմելոջ ջրի ցանցը ամիսը երկու անգամ վարակազերծվում է ջուր մատակարարող կազմակերպության կողմից:

Բնակարանային Տնտեսություն

Համայնքի տարածքում կան երկու և ավելի բնակարան ունեցող 33 բնակելի շենքեր՝ 5250 քառ. մ ընդհանուր մակերեսով, որոնք սեփականաշինորհված են գյուղի 94 ընտանիքներին: Ինչպես նաև 1 վագոն տնակ և 1 առանձնատուն:

Հողատարածքի Օգտագործում

Պարտիզակի ընդհանուր հողատարածքը, հատակագծի սահմաններում, կազմում 3279.93 հա, որից մշակության նպատակով կարելի է օգտագործել 400հա-ից ավելի, չնայած սեփականաշինորհվել է 258 հա հողատարածք:

Սեփականաշինորհված հողատարածքները ունեն հետևյալ տեսքը՝

վարելահողեր	203.60 հա
պտղատու այգիներ	---
խաղողի այգիներ	30 հա
արոտավայր	474 հա
հատուկ նշանակության հողեր	2427.60

Մնացած տարածքը՝ 94 հա գյուղատնտեսության համար օգտագործելի չէ:

Գյուղատնտեսության համար պիտանի մոտ 130հա հողերը գտնվում են բարձիթողի վիճակում: Գյուղամերձ արոտավայրերը կազմում են 474 հա:

Գյուղատնտեսություն

Պարտիզակ գյուղական համայնքը իր ստեղծման օրվանից եղել է այգեգործական, իսկ ավելի ուշ այգե-անասնապահական տնտեսություն. Մշակվել է 150 հա խաղողի այգի, 80 հա տարբեր տեսակի պտղատու այգի, հացահատիկային և այլ գյուղատնտեսական կուլտուրաներ՝ ավելի քան 100 հա:

Ներկա դրությամբ բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, որին նպաստում է բնակլիմայական պայմանները: 1990-2000թթ ռոտզման ջրի պակասի պատճառով բոլոր տեսակի մշակաբույսերը կանգնեցին չորացման եզրին: Այժմ գյուղում մնացել է ընդամենը 30 հա խաղողի և 30 հա բազմամյա խոտհարկ: Ռոտզման ջուրը ստանում ենք Արգնի - Շամիրամ ջրանցքից, որը գտնվում է ջրանցքի վերջնակետում:

Կրթություն

Գյուղում գործում է միջնակարգ դպրոցը, որը գործում է նորակառույց դպրոցական շենքում՝ 450 քառ. մ ընդհանուր մակերեսով: Դպրոցն անվանակոչված է գոհված

ազատամարտիկի անունով: Դպրոցում սովորում են 48 աշակերտներ, որոնց դասավանդում և սպասարկում են 18-ից ավելի ուսուցիչներ և աշխատողներ:

Մշակույթ, Սպորտ, Հոգևոր Դաստիարակություն

Համայնքում գործող մշակույթի տունը շենքային պայմանների և ֆինանսների սղության պատճառով փակել է: Շենքային պայմանների բացակայության պատճառով գրադարանը հնձնել ենք Պարտիզակի միջին դպրոցին: Գյուղում գործում է վոլեյբոլի, ֆուտբոլի մարզադաշտեր, որոնք անբարեկարգ վիճակում են և վերանորոգման խիստ կարիք ունեն:

Առողջապահությունը

Գյուղն ունի նոր կառուցվածք և ժամանակի պահանջներին համապատասխանող բուժ-մանկաբարձական կետը, որը կառուցվել է 1999թ-ին <<Փրկեք երեխաներին>> կազմակերպության և բնակիչների համագործակցության արդյունքում: 2007թ-ին իրականացվել է շենքի կապիտալ վերանորոգում և թարմացվել է գույքը ամբողջությամբ: Այս նվիրական գործը իրականացրել են <<Փրկեք երեխաներին>> և <<Նովա>> հասարակական կազմակերպությունների միջոցով:

Համայնքի ուժեղ կողմերը

Գյուղի բնակչիմայական պայմանները, որը ոռոգման ջուր ունենալու դեպքում թույլ կտա գյուղին արտադրել բոլոր տեսակի գյուղ մթերքներով և մրգերով:

1. Ոռոգման ցանցի առկայությունը
2. Խմելու ջրի ջրագծի և ջրավազանի առկայությունը
3. Աշխատուժի առկայությունը

Համայնքի Թույլ կողմերը

1. Մշակույթի տան և գրադարանի շենքի բացակայությունը
2. Գյուղապետարանի շենքի բացակայությունը
3. Գյուղամիջյան ճանապարհների 3,0 կմ երկարությամբ հատվածի անբարեկարգ վիճակը
4. Ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակը
5. Եթե համայնքում չզարգանան արտադրությունը, գյուղատնտեսությունը և մանր բիզնեսը, ապա տեղի կունենա բնակչության արտահոսք գյուղից
6. Ոռոգման ջրի անբավարությունը

Համայնքի Ռազմավարություն և Հիմնական Նպատակները

Համայնքի խաղողի և պտղատու այգիներ բերքատվության բարձրացման ճանապարհով ր նոր այգիների հիմնման ճանապարհով ավելացնել բնակչության եկամուտները, բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ, մաքուր և գրավիչ բնակավայր:

Հիմնական նպատակները

1. Ձեռք բերել համայնքի համար գյուղ տեխնիկա և գյուղ գործիքներ:
2. Կառուցել համայնքային կենտրոն և գյուղապետարան:
3. Ոռոգման ներքին ցանցի վերանորոգում մոտ 1000մ:
4. Խմելաջրի ներքին ցանցի լրիվ վերանորոգում:
5. Բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:
6. Ապահովել տրանսպորտային միջոցների միջհամայնքային երթևեկության բավարար պայմաններ:
7. Գերեզմանոցի ցանկապատումը, գերեզմանոցում և հուշարձանում ջրով ապահովվելը:
8. Համայնք մտնող 6,5 կմ երկարությամբ ճանապարհի լրիվ ասֆալտապատում:

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրեր,
նպատակների առաջադրում և կոնկրետ
խնդիրների ձևավորում:

Օրագիր N1

Գյուղ տեխնիկայի և գյուղ գործիքների ձեռքբերում

Նպատակը

Ապահովվել համայնքի բնակչությանը գյուղատնտեսական տեխնիկայով և գործիքներով:

Խնդիր 2013-2016 գյուղատնտեսության նախարարության համապատասխան բաժնի սիջոցով ձեռք բերել գյուղ տեխնիկա և գյուղ գործիքներ որպեսզի գյուղացին ավելի կապված լինի սեփականաշնորհված հողին:

Պատասխանատու՝ գյուղապետարան

Օրագիր N2

Նպատակ

Կառուցել Համայնքային և գյուղապետարան

Խնդիր

4.2. պետական կառավարման մարմինների աջակցությամբ 2013թ-ին ծրագրել և վինչև 2016թ ավարտել համայնքային կենտրոնի և գյուղապետարանի շենքի կառուցումը: Համայնքի պատասխանատվությունը հիշյալ գործում հետևյալն է՝

1. Մասնակցել նախագծման աշխատանքներին, և միևնույն ժամանակ կատարել հող հատկացում:
2. Ակտիվ մասնակցություն ապահովել շինարարությանը, շինարարությունը սկսելու համար հայտարարել մրցույթ /տենդեր/:
3. Հետևել շինարարության ամբողջ ընթացքին, և հետամուտ լիել նախագծի լիարժեք և լիովին կատարման ընթացքին:

Օրագիր N3

Նպատակ

Կատարել համայնքի ներսում գործող մոտ 700մ ոռոգման ներքին ցանցի վերանորոգումը:

Ինդիք

2013-2016թ ընթացքում իրականացնել համայնքի ներսում գործող ոռոգման ներքին ցանցի վերանորոգումը և ապահովել համայնքի ներսում եղած այգիների և սնամեղքերի ոռոգումը:

Պատասխանատու՝ գյուղապետարան

Օրագիր N4

Նպատակ

Խմելաջրի ներքին ցանցի վերանորոգումը և համայնքի ազգաբնակչության ապահովելը շուրջորյա խմելու ջրով, բարելավել բնակչության կենցաղային պայմանները:

Խնդիր

Մինչև 2014թ վերակառուցել ամբողջությամբ խմելաջրի ներքին ցանցը, ապահովել ազգաբնակչությանը մաքուր խմելաջրի մատակարարմամբ: Համայնքի ազգաբնակչությանը կառուցել մեկ ընտանիքին մեկ ծորակ խմելու ջուր և ապահովել ազգաբնակչությանը շուրջորյա խմելաջրով:

Պատասխանատու՝ գյուղապետարան

Մրագիր N5

Նպատակ

Բարելավել ազգաբնակչությանը սոցիալ-տնտեսական պայմանները: Թեթևացնել բնակչության նտեսական հոգսերը:

Խնդիր

1. Ամեն տարի էժան գներով ձեռք բերել բարձր որակի և անհրաժեշտ քանակի սերմացու, պարարտանյութ և թունաքիմիկատներ համայնքի ազգաբնակչությանը սեփականաշնորհված վարելահողերի և այգիների արդյունավետ մշակման համար:
2. Օգնել ազգաբնակչությանը արտադրած գյուղատնտեսական մթերքների իրացման համար, համապատասխան ձեռնարկությունների հետ համագործակցության միջնորդությամբ:

Պատասխանատու՝ Գյուղապետարան:

Մրագիր N6

Նպատակ

Ապահովել տրանսպորտային միջոցների առկայությունը և անվտանգ երթևեկությունը միջհամայնքային ներհամայնքային ճանապարհներով:

Խնդիր

200մ երկարությամբ բարեկարգ և ասֆալտապատ նոր ճանապարհ և լրիվ երկարությամբ ճանապարհ:

1. Մինչև 2013թ վերջը կառուցել 2000մ երկարությամբ բարեկարգ և ասֆալտապատ նոր ճանապարհ:
2. Նորոգել 6,5կմ երկարությամբ ճանապարհ մինչև Երևան-Գյումրի մայրուղին:
3. Ապահովել համայնքում տրանսպորտային միջոցների կանոնավոր երթևեկությունը:

Վերը նշված խնդիրների իրականացման համար օգտագործել բոլոր կազմակերպությունների միջոցները և համայնքի բնակչության աշխատուժը:

Պատասխանատու՝ Գյուղապետարան:

Օրագիր N7

Գերեզմանոցի ցանկապատում

Նպատակ

Մեկուսացնել գերեզմանոցը շրջակա արոտավայրերից և կենդանիներից գերծ պահելը:

Խնդիր

Մինչև 2015թ համայնքի և բնակիչների միջոցով, հովանավորների աջակցությամբ ցանկապատել համայնքի սեփականություն հանդիսացող գերեզմանոցը:

Պատասխանատու՝ Գյուղապետարան:

Օրագիր N8

Նպատակ

Համայնք մտնող 6,5 կմ երկարությամբ ճանապարհի լրիվ ասֆալտապատումը կամ ամբողջովին կատարել փոսալցում:

Խնդիր


Մինչև 2016թ լրիվ ասֆալտապատել Երևան – Գյումրի մայրուղուց մինչև համայնք մտնող 6,5 կմ երկարությամբ ճանապարհը: Ապահովել տրանսպորտային երթևեկության կանոնավոր և անխափան աշխատանքը:

Օրագրի իրականացման համար դիմել ՀՀ կառավարություն աջակցություն և օգտագործել համայնքի բնակչության աշխատուժը:

Պատասխանատու՝ Գյուղապետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՆ



**Համայնքի զարգացման քառամյա ծրագրի
հիմնական ցուցանիշները**

ՀՀ	ցուցանիշներ	չափի միավոր	2013	2014	2015	2016
1	Համայնքի տարածքը	հա	3279,93	3279,93	3279,93	3279,93
2	Բնակչության թիվը	մարդ	362	375	390	420
3	Մտունդը	մարդ	6	8	12	15
4	Մահացությունը	մարդ	—	—	—	—
5	Աշխ. ռեսուրսներ այդ թվում	մարդ	140	150	160	170
	Զբաղվածները ըստ տնտեսական ճյուղերի	մարդ	120	130	135	140
6	Գործազրկության մակարդակը	%	35	40	45	50
7	Առևտրի և հասարակակն սննդի օբեկտի թիվը	հատ	4	4	5	5
8	Պահուստային հողեր	հա	80,0	80,0	80,0	80,0
9	Պահուստային հողերի օգտ. մակարդակը	%	—	—	—	—
10	Ներհամայնքային ռոռզման ցանցի երկ.	կմ	34	34	34	34
11	Ռոռզման համակարգի տակ գտնվող հողեր	հա	700	700	700	700
12	Ներհամայնքային փողոցների և ճանապարհ. երկ.	կմ	2,3	2,5	3,0	3,3
13	Մասնավոր բնակելի ֆոնդ	քմ	5786	5786	5786	5786
14	Բնակարանի կարիգավորների թիվը	հատ	35	35	40	45
15	Մեկ ծնչին ընկնող խմելաջրի սպառումը	լօ	200	250	250	300
16	Զրի կորուստները ցանցում	%	35	30	20	10
17	Սովորողների թիվ հանրակրթական դպրոցում	մարդ	55	60	65	75
18	Զբարեկացված փողոցների և ճանապարհների երկ.	կմ	2,0	1,7	1,5	1,1
19	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	4	5	5	5

Համայնքի ֆինանսական գնահատումը և կանխատեսումը

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արագածոտն մարզի Պարտիզակ համայնքը ունի հետևյալ պատկերը:

ՀՀ	Եկամտի տեսակ	2013 փաստ	2014	2015	2016
Ս	Հարկային եկամուտներ և տուրքեր	1473,0	1500,0	1550,0	1600,0
1	Հողի հարկ	1283,0	1290,0	1310,0	1350,0
2	Գույքահարկ փողադր.	200,0	210,0	240,0	250,0
3	Եկամտահարկ	—	—	—	—
Բ	Ոչ հարկային եկամուտներ	500,0	550,0	600,0	600,0
4	Պահուստայի հողերի վարձավճարներ	500,0	550,0	550,0	600,0
5	Գույքի վարձակալության վճարներ	—	—	—	—
6	Տեղական վճարներ	20,0	30,0	40,0	60,0
7	Այլ ոչ հարկային եկամուտ	—	—	—	—
Գ	Պաշտոնական տրանսֆերներնր դոտացիա	3500,0	3500,0	4000,0	4000,0
Դ	Տարեսկզբի ազատ մնացորդ	—	—	—	—
	Եկամ. ընդ	—	—	—	—

Համայնքի ֆինանսական գնահատումը

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը

Պարտիզակ համայնքը ունի հետևյալ պատկերը

h/h	Եկամտի տեսակները	2009	2010	2011	2012
Ա	Հարկային եկամուտներ և տուրքեր	1300.0	1350.0	1400.0	1500.0
1	Հողի հարկ	2200.0	1600.0	1283.0	1290.0
2	Գույքահարկ փոխադր.	175.0	180.0	190.0	200.0
3	Եկամտահարկ	-	-	-	-
Բ	Ոչ հարկային եկամուտներ	-	-	600.0	600.0
4	Պահուստային հողերի վարձավճարներ	300.0	300.0	500.0	500.0
5	Գույքի վարձակալության վճարներ	-	-	-	-
6	Տեղական վճարներ	20.0	30.0	30.0	20.0
7	Ոչ այլ հարկային եկամուտներ	-	-	-	-
Գ	Պաշտոնական տրանսֆերներնր դոտացիա	2000.0	2000.0	3500.0	3500.0
Դ	Տարեկան ազատ մնացորդ ընդամենը	-	-	-	-